ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ԶԻԱԲՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՅՈՆՏԵՍԱՅԻՆ ԶԻԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՎԱՐՉԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ 1937 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի № 796 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐՈՎ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

ՍՈՎԵՏԻՆ
ՀԱՍԱՐ
1-38749թ

Հաստատում եմ՝
ԽՍՀՄ-ի Հողագործության ժո-
ղովրդական Կոմիսար՝
[redacted]
21/5—1937 թ.

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՁԻԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կոլտնտեսային ձիաբուծական ապրանքային ֆերմաներում բոլոր տեսակի աշխատանքները կատարելու համար կոլտնտեսության վարչությունը կոլտնտեսության անդամներից ստեղծում է մշտական ձիաբուծական բրիգադ 3 տարուց վոչ պակաս ժամանակով՝ գլխավորությամբ բրիգադավարի, վորին նշանակում է կոլտնտեսության վարչությունը 2 տարուց վոչ պակաս ժամանակով։

Ախոռային պահպանման պայմաններում ֆերման 25-ից ավելի մայր ձի իր սերնդով ունենալու դեպքում կազմակերպվում է մի քանի բրիգադ՝ մոտավորապես յուրաքանչյուր 25 մայր ձիու և իր սերնդի համար առանձին բրիգադ։ Ցերամակային պահպանման պայմաններում ֆեր-

ման 100-ից ավելի մայր ձի իր սերնդով ունենալու դեպքում նույնպես կազմակերպվում է մի քանի բրիգադ՝ մոտավորապես յուրաքանչյուր 100 մայր ձիու և իր սերնդի համար առանձին բրիգադ։

Կոլտնտեսականների մշտական բրիգադում աշխատողների թիվը սահմանում է կոլտնտեսության վարչությունը, հաշվի առնելով ֆերմայում կամ բրիգադում յեղած բոլոր անասունների լրիվ սպասարկումը։

2. Կոլտնտեսային ձիաբուծական սպրանքային ֆերմայի ամենորյա ղեկավարության համար կոլտնտվարչությունը նշանակում է ֆերմայի վարիչ 2 տարուց վոչ պակաս ժամանակով։

Մեկ բրիգադով սպասարկվող ձիաբուծական սպրանքային ֆերմայում բրիգադավարը միաժամանակ հանդիսանում է ֆերմայի վարիչը։

3. Արտելի վարչությունը յուրաքանչյուր ձիաբուծական ֆերմայի և բրիգադի ամրացնում է վորոշ քանակությամբ ձի, սպասարկման համար անհրաժեշտ գույք, ախոռներ, կերեր պահելու համար շենքեր, արոտներ, ջրաբբ և կոլտնտեսության առանձնացված կերային ֆոնդերից տարվա պահանջի չափով առանձնացվող կերեր։

4. Անասնապահության զարգացման պետական

պլանի համապատասխան՝ կոլտնտվարչությունը ֆերմայի վարիչի, բրիգադավարի և զոոտեխնիկի կամ տեխնիկ-անասնապահի հետ միասին տարվա սկզբին սահմանում է ամբողջ ֆերմայի, յուրաքանչյուր բրիգադի և առանձին կոլտնտեսականի համար տարեկան արտադրական առաջադրանք՝ զուգավորման, ծնի, մատղաշի աճեցման և սպրանքային արտադրանքի հանձնման մասին։ Ֆերմայի և բրիգադի տարեկան արտադրական առաջադրանքը հաստատում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովը։

Բացի դրանից, կոլտնտվարչությունը տարվա սկզբին յուրաքանչյուր ձիաբուծական բրիգադի համար սահմանում է գոմաղբի կուտակման ու կանոնավոր պահպանման առաջադրանք։ Գոմաղբը դաշտ փոխադրելուց առաջ ֆերմայի վարիչը կամ բրիգադավարն այդպիսին ակտով հանձնում է դաշտավարական բրիգադների բրիգադավարներին՝ ակտում նշելով գոմաղբի քանակն ու նրա վորակը։

5. Բրիգադի առանձին անդամների միջև աշխատանքն անմիջականորեն բաշխում է բրիգադավարը, վոր պարտավոր է լավագույն կերպով ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կոլտնտեսականի, աշխատանքի բաշխման ժամանակ թույլ չտալ վորևե խնամություն, ընտանեկանու-

թյուն, և խիստ հաշվի առնել յուրաքանչյուրի աշխատանքային վարակը, փորձը և ֆիզիկական ուժը։

Տոհմային արտադրող հովատակների սպասարկումը (կերակրելը, ջրելը, մաքրելը, ման ածելը, նույնպես և զուգավորում անցկացնելը և այլն), վարպետ որենք, դրվում է բրիգադավարի վրա։

6. Ֆերմայի բոլոր աշխատանքները՝ կերակրելը, ջրելը, մաքրելը, մարզեցնելը (տրենինգ), ման ածելը, զուգավորումը, ծինը, մատղաշին դաստիարակելը, ձիերին արածեցնելը, ձիակազմին աշխատանքի մեջ ոգտագործելը և այլն կատարվում են ֆերմայի վարիչի և բրիգադավարի անմիջական ղեկավարությամբ։

Ձիաբուծական ապրանքային ֆերմայի (ՁԱՖ) վարիչի պարտականությունների մեջ մտնում են.

ա) ՁԱՖ-ի կոմպլեկտավորումը մայրերով և արտադրողներով՝ սահմանված կոնդիցիաների և ՁԱՖ-ի ուղղության համաձայն.

բ) զուգավորման կամպանիայի կազմակերպելն ու անցկացնելը.

գ) հղի զամբիկների խնամելն ու ծնի անցկացնելը.

դ) մատղաշի կանոնավոր աճը կազմակերպելը.

ե) մարուկների աճեցման արտադրական առաջադրանքի կատարելը.

զ) ձիերի կանոնավոր խնամքը, կերակրումն ու պահպանումը կազմակերպելը.

է) անասնաբուժա-սանիտարական միջոցառումների կիրառման հսկողությունը.

ը) ձիերի մարզեցման ու սուզման աշխատանքները կազմակերպելը.

թ) ձիասարքով ու մարզագույքով ապահովելը և այդպիսիների պահպանման հսկողությունը.

ժ) ձիերին արոտներով ապահովելը և դրանց կանոնավոր ոգտագործման ղեկավարությունը.

ի) արտադրության մեջ ձիապաններին ու բրիգադավարներին ճիշտ դասավորելը և նրանց աշխատանքի ղեկավարությունը։

Ձիաբուծական ապրանքային ֆերմայի վարիչը պատասխանատու է ձիաբուծական ֆերմայի ձիաբուծական ամբողջ արտադրության կազմակերպման, նրա արտադրական առաջադրանքների ու պետական պլանների կատարման համար։

Մշտական բրիգադներում ձիաբուծական ապրանքային ֆերմայի վարիչը յուրաքանչյուր ձիապանի ամրացնում է վարող քանակությամբ ձի 3 տարուց վոչ պակաս ժամանակով՝ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի հաստատած բեռնվածության նորմաների համաձայն։

Ամառային պահպանման պայմաններում 25-ից պակաս մայր, իսկ յերամակային պահպանման

պայմաններում 100-ից պակաս մայր ունեցող ձիապրանքային ֆերմաներում ՁԱՁ-ի վարիչը չի ազատվում ֆերմայի ձիերի խնամքի աշխատանքից, և ունենում է արտադրող-հովատակներին խնամելու բեռնվածություն։

7. Բրիգադի աշխատանքը ղեկավարում է բրիգադավարը (ավագ ձիապանը կամ յերամակավարը), վորի պարտականությունների մեջ մտնում են.

ԱԽՈՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ա) ձիերի սպասարկումը՝ սահմանված նորմաների համաձայն։

բ) ձիապանների և յերամակավարների աշխատանքի ղեկավարությունը և այդ աշխատանքը վորակով կատարելու հսկողությունը.

գ) զամբիկների զուգավորման կամպանիայի ուծնի անցկացնելը.

դ) կերերի ու ցամքարի ստանալը, իր ժամանակին տխոռներ փոխադրելը, պահպանելը և խնայողաբար ծախսելը՝ սահմանված նորմաների համաձայն.

ե) ձիասարք ստանալը, առանձին ձիերի հարմարեցնելը, լավ վիճակում ու կանոնավոր պահպանելը.

զ) ձիերին ընդունելն ու աշխատանքի ուղարկելը, նրանց առողջության վերաբերյալ հսկողությունը և թերությունները (ջարդվածքներ, քերծվածքներ, վերքեր, կաղություն և այլն) նկատելու դեպքում ՁԱՁ-ի վարիչին զեկուցելը։ Ձիերի բացահայտ անբավարար դրություն (զերհոգնածություն, զանազան վնասվածքներ, հյուծվածություն և այլն) հայտաբերելու դեպքում բրիգադավարն իրավունք ունի ձիուն աշխատանքի չուղարկել՝ այդ մասին հայտնելով ՁԱՁ-ի վարիչին ի գիտություն.

է) ախոռին ամրացված կերապահեստների ու այլ շենքերի կանոնավոր պահպանման, շենքերի անաննաբուժա-սանիտարական դրության և հակահրդեհային միջոցառումների հսկողությունը.

ը) ախոռի համար սահմանված ներքին կարգապահական կանոնների կիրառման հսկողությունը.

թ) մորուկներին մայրերից զատելն ու ախոռային ռեժիմին վարժեցնելը.

ժ) մատղաշ ձիերին ձիասարքի սովորեցնելն ու վարժեցնելը։

ՅԵՐԱՄԱԿԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ա) յերամակն արածեցնելը, ձիերին ժամանակին ու լավորակ ջրով ջրելը.

բ) յերամակավարների աշխատանքի ղեկավա-

բությունը, ձմռանն ու ամռանը արոտների կանոնավոր ոգտագործման հսկողությունը, փոթորկի, դաշտի սառցակալման ժամանակ ձիերին ծածկի տակ պահելը, այդ շրջանում լրացուցիչ կերակրում կազմակերպելը։

գ) յերամակի ձիերի դրության հսկողությունը, հիվանդներին առանձնացնելը և բուժման ուղարկելը։

դ) յերամակի ձիաքանակի հաշվառումը, զուգավորման ու ծնի ժամկետների գրանցումը, նորածին մարուկների նկարագրումը։

Բրիգադավարը (ավագ ձիապանը կամ ավագ յերամակավարը) առաջ է քաշվում ՁԱՖ-ի վարիչի կողմից և հաստատվում է կոլտնտեսության կողմից։

Բրիգադավարին աշխատանքից կարելի յե հանել միայն կոլտնտեսության վորոշմամբ։

Ամենորյա աշխատանքում բրիգադավարն անմիջականորեն յենթարկվում է ՁԱՖ-ի վարիչին։

8. Ձիապանի և յերամակավարի պարտականությունների մեջ մտնում են։

ԱՆՈՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ա) Նրան ամրացված ձիերին կերակրելը՝ սահմանված նորմայի ու ընդունված կարգ ու կանոնի համաձայն, իր ժամանակին նրանց լավորակ ջրով ջրելը։

բ) ձիերի մաքրելը և սմբակների խնամքը։

գ) ախոռի ու ձիու խնամքի համար պահանջվող գույքի մաքրելը։

դ) ձիասարքը լավ վիճակում պահպանելը։

ե) ձիերին ու ձիասարքն աշխատանքի բաց թողնելը և աշխատանքից հետո հետ ընդունելը։

զ) զամբիկների ցանկության հայտարերման և զուգավորման համար բեղմնակայան ուղարկելու հսկողությունը։

է) մարուկներին զատելը, ախոռային ռեժիմի վարժեցնելը և սահմանված կարգ ու կանոնի համաձայն նրանց խնամելը։

ը) անասնակերն ախոռ փոխադրելը, ձիերին կերակրելու համար նրա նախապատրաստելը (շուռ տալու միջոցով փոշուց ազատելը, շոգիացումը և այլն) և սահմանված նորմաներով ծախսելը։

թ) ամառ ժամանակ ձիերին արոտում արածեցնելը։

ՅԵՐԱՄԱԿԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ա) ձիերին արածեցնելը և ջրելը։

բ) յերամակը գիշատիչների հարձակումից պաշտպանելը։

գ) դաշտի սառցակալման և փոթորկի ժամանակ ձիերին խտացրած և կոպիտ կերերով լրացուցիչ կերակրելը։

դ) վատ յեղանակներին ձիերին ծածկի տակ կամ քամիներից պաշտպանված տեղում պահելը.

ե) ձիերի առողջական դրության հսկողությունը և հիվանդություն յերևալու դեպքում ժամանակին բրիգադավարին հայտնելը։

9. Ձիաբուծական ապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է գործարքի հիման վրա՝ աշխորը գրանցելով ձիերի սպասարկման, զուգավորման, ծնի պլանների կատարման, մտրուկների պահպանման ու կանոնավոր աճեցման, առողջական դրության և գիրացման համար։

10. ՁՍԾ-ում աշխատող կոլտնտեսականների բեռնվածության նորմաները և աշխատանքների գործարքային գնահատումները մշակում է կոլտնտավարչությունը և հաստատում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովը։

Բեռնվածության նորմաները պետք է մատչելի լինեն յուրաքանչյուր բարեխղճորեն աշխատող ձիապանի և յերամակավարի համար և կազմված լինեն հաշվի առնելով ձիերի, շինքերի, արոտների և այլնի դրությունը։

Վորպես բեռնվածության որինակելի նորմաներ հանձնարարվում են հետևյալները.

ա) արտադրող հովատակներին խնամող ձիապանն սպասարկում է 4 հովատակի.

բ) զամբիկներին խնամող ձիապանն սպասարկում է 8 զամբիկի.

գ) մայրերից զատված մինչև 3 տարեկան մտրուկներին խնամող ձիապանն սպասարկում է 10—12 մտրուկի.

դ) մարզվող մատղաշներին խնամող ձիապանն սպասարկում է 5 մտրուկի.

ե) զամբիկների յերամակներ սպասարկելու համար յուրաքանչյուր 100 գլխին առանձնացվում է 5 յերամակավար.

զ) մատղաշների յերամակներ սպասարկելու համար յուրաքանչյուր 100 գլխին առանձնացվում է 5 յերամակավար։

11. Ձիապանների ու յերամակավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է գործարքային-պրոգրեսիվ համակարգությամբ, հաշվի առնելով բեռնվածությունը, աշխատանքի վորակը, ձիերի դրությունը, նրանց աշխատունակությունը և արտադրական առաջադրանքների կատարումը։

Վորպես որինակելի հանձնարարվում են հետևյալ գործարքային գնահատումները.

ա) Ձիապանին՝ արտադրող-հովատակներին խնամելու համար մեկ գլխին մեկ որում գրանցվում է.

լավ գիրության դեպքում . . . 0,33 աշխոր
միջակ » » . . . 0,25 »
միջակից ցածր գիրության դեպ. 0,17 »

Զուգավորման պլանը կատարելու դեպքում յուրաքանչյուր զուգավորված և հովատակից լրիվ հրաժարված զամբիկի համար գրանցվում է մեկ աշխոր։

բ) Ձիապանին՝ զամբիկներին խնամելու համար մեկ գլխին մեկ որում գրանցվում է.

լավ գիրության դեպքում . . . 0,17 աշխոր
միջակ » » . . . 0 13 »
միջակից ցածր գիրության դեպ. 0,09 »

Յուրաքանչյուր՝ մինչև մորից զատելն աճեցրած մտրուկի համար ձիապանին գրանցվում է 25 աշխոր, իսկ յուրաքանչյուր՝ մինչև զատելն աճեցրած տոհմային մտրուկի համար՝ 25 աշխոր։

գ) Ձիապանին՝ մորից զատված և մինչև 3 տարեկան մտրուկներին խնամելու համար մեկ գլխին մեկ որում գրանցվում է.

լավ գիրության դեպքում . . . 0,13 աշխոր
միջակ » » . . . 0,10 »
միջակից ցածր գիրության դեպ. 0,07 »

Յուրաքանչյուր՝ մինչև տարվա վերջը պահպանված մտրուկի համար ձիապանին գրանցվում է 5 աշխոր, իսկ յուրաքանչյուր՝ մինչև տարվա

վերջը պահպանված տոհմային մտրուկի համար՝ 10 աշխոր։

դ) Ձիապանին՝ մարզվող մատղաշներին խնամելու համար մեկ գլխին մեկ որում գրանցվում է.

լավ խնամքի և պահպան. դեպք. 0,26 աշխոր
միջակ » » » » 0,20 »
միջակից ցածր
խնամքի և » » 0,14 »

Մեխանիկական վնասվածքների բացակայության և լավորակ մարզեցման դեպքերում ձիապանին յուրաքանչյուր գլխի համար գրանցվում է 20 աշխոր։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սահմանված նորմայի դիմաց ավելի շատ ձիերի սպասարկելու դեպքում, չիջեցնելով խնամքի ու մաքրման վորակը, յուրաքանչյուր գլխի վարձատրությունը բարձրացվում է.

նորմայից ավելի առաջին գլխի համար 10%-ով
» » յերկրորդ » » 12%-ով
» » յերրորդ և
ավելի » » 15%-ով

ե) Ցերամակավարների բրիգադին՝ մայրերի յերամակին սպասարկելու համար մեկ գլխին մեկ որում գրանցվում է.

լավ գիրության դեպքում . . . 0,08 աշխոր
միջակ » » . . . 0,06 »
միջակից ցածր գիրության դեպք. 0,04 »

Յուրաքանչյուր՝ մինչև զատելն աճեցրած մորուկների համար, յերամակավարների բրիգադին գրանցվում է 20 աշխոր, իսկ յուրաքանչյուր՝ մինչև զատելն աճեցրած տոհմային մորուկի համար՝ 25 աշխոր։

զ) Յերամակավարների բրիգադին՝ մորից զատված և մինչև 3 տարեկան մորուկներին խնամելու համար մեկ գլխին մեկ օրում գրանցվում է.

լավ գիրության դեպքում . . . 0,08 աշխոր
միջակ » » . . . 0,06 »
միջակից ցածր գիրության դեպք. 0,04 »

Յուրաքանչյուր մինչև տարվա վերջը պահպանված մորուկի համար յերամակավարների բրիգադին գրանցվում է 5 աշխոր, իսկ յուրաքանչյուր՝ մինչև տարվա վերջը պահպանված տոհմային մորուկի համար՝ 10 աշխոր։

է) ՁԱՖ-ի վարիչին՝ նայած ֆերմայի չափին, նրա վորակավորմանը և աշխատանքի ստաժին, գրանցվում է 15—40%-ով ավելի աշխոր, քան ՁԱՖ-ի մեկ ձիապանի կամ յերամակավարի միջինը։

ը) բրիգադավարին աշխորը գրանցվում են 10—25%-ով ավելի, քան նրա բրիգադի մեկ ձիապանի կամ յերամակավարի միջինը։

թ) զամբիկին աշխատեցնող ձիավարին յուրաքանչյուր՝ մինչև զատելն աճեցրած մորուկի համար գրանցվում է 20 աշխոր, յուրաքանչյուր՝ մինչև զատելն աճեցրած տոհմային մորուկի համար՝ 25 աշխոր և յուրաքանչյուր՝ մինչև հրաժարվելը զուգավորված զամբիկի համար՝ 5 աշխոր։

12. Ձիերի ախոռային պահվածք ունեցող ՁԱՖ-երում ֆերմայի վարիչը շաբաթը մեկ անգամից վոչ պակաս հաշվում է ՁԱՖ-ում աշխատող յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած ամբողջ աշխատանքը և սահմանված գործարքային գնահատումների համապատասխան կոլտնտեսականի աշխատանքային դրքույկի մեջ գրանցում է նրա վաստակած աշխորերի քանակը։

Կոլտնտեսության վարչությունը ՁԱՖ-ում աշխատող կոլտնտեսականների ցուցակն ամեն ամիս փակցնում է պատին՝ նշելով անցած ամսվա ընթացքում յուրաքանչյուր կոլտնտեսականի վաստակած աշխորերի քանակը։

ՁԱՖ-ում աշխատող յուրաքանչյուր կոլտնտե-

1-38749
ԱՐԽԻՎ
ՀՐԱՊԱՐԱԿ
ՀՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

սականի տարվա ամբողջ աշխատանքը և յեկամուտը, հաշվետարիից դատ, անպայմանորեն հաստատում են նաև ՁԱՖ-ի վարիչը և կոլտնտեսության նախագահը։ Ձիաբուծական բրիգադի յուրաքանչյուր կոլտնտեսականի վաստակած աշխատանքի քանակի ցուցակը փակցվում է ընդհանուրին ի գիտություն վոչ ուշ, քան 2 շաբաթ առաջ մինչև կոլտնտեսության յեկամուտների բաշխումը հաստատող ընդհանուր ժողովը։

13. Յեթե ՁԱՖ ի բրիգադը յուր լավ աշխատանքի հետևանքով ապահովում է մատղաշի լավ զարգացումը, ձիերի լավ դիրությունը, սերնդի լրիվ պահպանումը, ապա արտելի վարչությունն այդ բրիգադի բոլոր անդամներին լրացուցիչ յեկամուտ և գրանցում՝ նրանց վաստակած աշխատանքի ընդհանուր թվի մինչև 10%-ի չափով, բրիգադում աչքի ընկնող հարվածայիններին՝ մինչև 15%, իսկ բրիգադավարին ու ֆերմայի վարիչին՝ մինչև 20%-ի չափով։

Յեթե բրիգադը վատ աշխատանքի հետևանքով թույլ է տվել ձիերի ու մատղաշի մի ջակից ցածր դիրություն, ստացված սերնդի մի ջակից ցածր պահպանում, ապա կոլտնտեսության վարչությունն այդ բրիգադի բոլոր կոլտնտեսականներին յեկամտից պակասեցնում է նրանց աշխատած աշխատանքի ընդհանուր թվի 10%-ի չափով։

14. Ձիաքանակը յուրաքանչյուր ամիս ստուգում է հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում են՝ կոլտնտեսության նախագահը, ՁԱՖ-ի վարիչը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, ձիապանը, անասնաբուժական սանիտարը և անասնաբուժակը, և որը որոշում է ձիերի դրությունը, մաքրման վորակը և աշխատանքի գրանցումների համապատասխանությունը ձիերի դրության և մաքրման վորակի հետ։

15. Ձիաբուծական ապրանքային ֆերմայում աշխատող բոլոր կոլտնտեսականները պարտավոր են խիստ պահպանել իրենց կոլտնտեսային սեփականությունը (ձիերը, դույքը, կերերը, շենքերը և այլն), բարեխղճորեն աշխատել, պահպանել ներքին կարգ ու կանոնը, վարչության և ՁԱՖ-ի վարիչի կողմից նրանց հանձնարարված աշխատանքը լավ կատարել, խիստ պահպանել աշխատանքի կարգապահությունը։

Դեպի հասարակական դույքն անտնտեսավար ու անհոգի վերաբերմունքի համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չգալու, անորակ աշխատանքի և աշխատանքային կար-

գաղտնության ու կանոնադրության ուրիշ խախտումների համար կոլտնտեսության վարչությունը հանցավորների նկատմամբ տուժեր և նշանակում գյուղատնտեսական արտելի կանոնադրության 17-րդ կետի համաձայն։

ԽՍՀՄ Հեծ. ծիրաբուծական գլխավոր
վարչության պետի տեղակալ՝ ԲՈՒՇՈՒԵՎ

Գլխավոր զոոտեխնիկ՝ ՑԱԿՈՎԼԵՎ



Ռուսերենից հայերեն թարգմանեց յեվ
մասնագիտորեն խմբագրեց՝ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ս. Այվազյան
Գլխավոր սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Գլավլիտ № 1215
Հրատարակ № 4319, պատվեր № 807, տիրաժ 2000
Հանձնված է արտադրության 1937 թ. հոկտեմբերի 13-ին
Ստորագրված է տպագրության 1937 թ. հոկտեմբերի 21-ին

Գեռհրատի 2-րդ տպարան, Յերեվան, Նալբանդյան, 11

ՀՀ Ազգային գրադարան
NL0938295

499
-30-
ԱՐԽ
4 НОЯ. 1937
I
3874

НКЗ Арм. ССР
Коневодческое управление

ИНСТРУКЦИЯ
по организации и оплате труда в колхозных коневодческих товарных фермах

С исправлениями и добавлениями на основании приказа НКЗ Союза ССР от 17-го апреля 1937 г. за № 796

Госиздат 1937 Ереван